

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«-----» ----- 2018 թվականի N° ----- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի N° 1428-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի «Մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N° 1428-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Որոշման հավելվածի 5-րդ կետի «բ» տողի 2-րդ սյունակից հանել «շախմատ» բառը:

2) Որոշման հավելվածի 5-րդ կետի «ա» տողի 2-րդ սյունակը «գեղասահք» բառից հետո լրացնել «, շախմատ» բառով:

3) Որոշման հավելվածի 5-րդ կետի «ե» տողի 2-րդ սյունակից հանել «ձյուդո» բառը:

4) Որոշման հավելվածի 5-րդ կետի «զ» տողի 2-րդ սյունակը «մականախաղ» բառից հետո լրացնել «, ձյուդո» բառով:

5) Որոշման հավելվածի 5-րդ կետի «դ» տողի 2-րդ սյունակից հանել «աթլետիկա» բառը:

6) Որոշման հավելվածի 5-րդ կետի «բ» տողի 2-րդ սյունակը ««ջրացատկ» բառից հետո լրացնել «, ատլետիկա» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի № 1428-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1. Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի № 1428-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելը պայմանավորված է մարզաձևերի ազգային ֆեդերացիաներից ստացված առաջարկություններով: Շախմատի և ձյուդոյի միջազգային օրացուցային պլաններում կատարվել են փոփոխություններ, համաձայն որոնց անցկացվում են շախմատի մինչև 8 տարեկանների աշխարհի և Եվրոպայի առաջնություններ, ինչպես նաև ձյուդոյի պատանիների աշխարհի և Եվրոպայի առաջնություններ և 10 տարեկանների միջազգային մրցաշարեր: Նշված մրցաշարերին պատրաստվելու համար անհրաժեշտ է որոշակի ժամանակահատված՝ կանոնավոր մարզվելու համար:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի № 1428-Ն որոշման հավելվածի՝ շախմատ և ձյուդո մարզաձևերում մարզադպրոց ընդունվողների նվազագույն տարիքը սահմանված է համապատասխանաբար 7 և 10 տարեկան, ինչը հնարավորություն չի տալիս նրանց պատրաստվելու մարզաձևերի միջազգային օրացուցային պլանով նախատեսված նոր մրցաշարերին:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Մանուկների ու պատանիների ֆիզիկական լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման չափորոշիչների մշակում:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Մարզաձևերի միջազգային օրացուցային պլանով նախատեսված նոր մրցաշարերին նախապատրաստման հնարավորություն:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից:

6. Ակնկալվող արդյունքը

Մարզաձևերի միջազգային օրացուցային պլանով նախատեսված նոր մրցաշարերին լավագույնս մասնակցություն, մրցանակային տեղերի գրավում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի N° 1428-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի N° 1428-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չի առաջանա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 1428-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի N° 1428-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: